570 Սուրբ Հոգի ամենակալ,

1. Սուրբ Հոգի ամենակալ,
Առաջնորդ մեր անսխալ,
Արդ առաջ տար քաղցրորեն,
Պանդուխտներս՝ վշտաց ձորեն:
Խոնջ հոգիք մեր թող ցնծան,
Երբ լսենք Քո քաղցր ձայն.
«Ո՛վ պանդուխտ՝ հոգնած, նկուն,
Հետևե՛ Ինձ դեպի տուն»:

2. Միշտ ներկա, միշտ իրական
Բարեկամ մեր աննման,
Մի՛ թողուր անմխիթար,
Մեզ ցավոց մեջ անհամար:
Երբ վշտաց ալիք բախին,
Եվ սրտերն մեր նվաղին,
Մեզ խոսե ձայնովդ սիրուն.
«Պանդուխտներ, եկե՛ք ի տուն»:

3. Գործն ու կռիվ այս սուրբ մարտին
Տերոջմով երբ ավարտին,
Եվ կավե նավն այս կյանքին
Խորտակվի մոտ եզերքին:
Մինչ հրաժեշտ տանք այս երկրին,
Արդ հոգիք մեր թող բերկրին՝
Լսելով ձայնդ՝ մեղմ, սիրուն՝
Պանդուխտներ, ալ եկե՛ք տուն: